ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայկանուշ Գուրգենի Այվազյան

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ը.00.06 - «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2020

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Թաթուլ Նորայրի Մանասերյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ Ներսիկի Հախվերդյան

տնտեսագիտության թեկնածու
Հրանտ Զավենի Հարությունյան

Առաջատար կազմակերպություն՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2021 թվականի փետրվարի 23-ին, ժամը 14^{00}-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Տնտեսագիտության թիվ 008 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0051, ք. Երևան, Հ. Էմինի 123:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020 թ. դեկտեմբերի 30-ին:

008 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ **տ.գ.թ., դոցենտ**
Ի.Բ. Պետրոսյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Տնտեսական աճը բնակչության բարեկեցության մակարդակի և կյանքի որակի բարելավման, աղքատության կրճատման, արտադրության ծավալների և ապրանքաշրջանառության ընդլայնման, ենթակառուցվածքների զարգացման ամենահզոր գործիքներից է: Հիմք ընդունելով տնտեսական աճի ունեցած նշված մի շարք առանձնահատկությունները՝ այսօր գրեթե բոլոր երկրները տնտեսական աճով են պայմանավորում իրենց երկրների զարգացումը:

Միջազգային տնտեսագիտական գրականության մեջ տնտեսական աճը և վերջինիս վրա ազդող գործոնները բազմիցս և մշտապես եղել են վերլուծության առարկա: Այս տեսանկյունից հատկապես կարևորվում են օտարերկրյա ուղղակի ներդրումները (այսուհետ՝ ՕՈՒՆ) և վերջիններիս ունեցած պատճառահետևանքային ազդեցությունները տնտեսական աճի վրա: Քանի որ ՕՈՒՆ-երը իրենց հերթին նպաստում են նոր արտադրական գործունեությունների ձևավորմանը, գործող տնտեսությունների զարգացմանը, նորագույն տեխնիկայի, տեխնոլոգիայի կիրառմանը և աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, կառավարման և կազմակերպական հմտությունների ձևավորմանը և կիրառմանը, ուստի վերջիններս չէին կարող անմասն մնալ տնտեասկան աճի ձևավորման գործընթացում:

Ելնելով ՕՈՒՆ-երի ունեցած բազմաթիվ դրական ազդեցություններից՝ տնտեսագիտական գրականության մի շարք տնտեսագետներ մշակել են վերջիններիս փոխազդեցության տեսություններ և մեխանիզմներ, ինչպես տեսականորեն, այնպես էլ գործնականորեն հատկապես վերջին երկու տասնամյակներում վերլուծել և հետազոտել են ՕՈՒՆ-երի ազդեցությունը տնտեսական աճի վրա: Նշված վերլուծությունները կատարվում են ինչպես առանձին երկրների օրինակով, այնպես էլ ըստ տարածաշրջանների, տնտեսական միությունների և միջազգային կազմակերպությունների անդամ երկրների համար:

ՀՀ տնտեսությունը միջազգային տնտեսության մի մասնիկն է և ևս անմասն չէ միջազգային տնտեսական քաղաքականություններից և գործունեություններից: ՀՀ-ում այսօր նույնպես տարվում է ներդրումների ներգրավմանն ուղղված քաղաքականություն, մշակվում են ներդրումային ծրագրեր, սահմանվում են մեխանիզմներ, որոնց արդյունքում պետք է մեծանա երկրի ներդրումային գրավչության մակարդակը՝ նպաստելով դեպի երկիր օտարերկրյա ներդրումների հոսքերի ավելացմանը: Վերոնշյալ հանգամանքները ամբողջապես ներկայացնում են դիտարկվող թեմայի արդիականությունն ու անհրաժեշտությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսական հետազոտության հիմնական նպատակն է ուսումնասիրել ՕՈՒՆ-երի և տնտեսական աճի միջև հնարավոր փոխկապվածությունը և ազդեցությունը, ստացված արդյունքների հիման վրա ներկայացնել ՀՀ օրինակով ճշգրիտ լուծումներ: Նշված նպատակի իրականացումը և լուծումը ենթադրում է որոշակի խնդիրների առաջադրում, որոնցից են՝

- ✓ Ուսումնասիրելով ներդրումների և տնտեսական աճի տեսամեթոդական հիմքերը՝ ներկայացնել տնտեսական աճի էությունը, գործոնները և շարժիչ ուժերը, օտարերկրյա ուղղակի ներդրումների էությունը, խրախուսման ձևերը և համակարգերը,
- ✓ Ներկայացնել ՕՈՒՆ-երի՝ տնտեսական աճի վրա ունեցած հնարավոր ազդեցության տեսամեթոդական ձևերը և մեխանիզմները,
- ✓ Պանելային վերլուծության շնորհիվ թվային տեսքով վերլուծել և ներկայացնել ՕՈՒՆ-երի ազդեցությունը տնտեսական աճի վրա,

- ✓ Ներդրումների ներգրավման տեսանկյունից ուսումնասիրել ՀՀ մրցակցային առավելությունները և խոչնդոտ գործոնները: Վերջիններիս հիման վրա մշակել երկրի ներդրումային գրավչության բարելավման մեթոդներ և մեխանիզմներ,
- ✓ Հետազոտել ՀՀ տնտեսության մեջ օտարերկրյա ուղղակի ներդրումների վերլուծական բնութագիրը ըստ տարիների, ոլորտների և համագործակցող երկրների,
- ✓ Ժամանակային շարքերի վերլուծության շնորհիվ բացահայտել ՀՀ-ում ՕՈՒՆ-երի և տնտեսական աճի փոխկապվածությունը և ներկայացնել ՀՀ տնտեսական աճի ապահովումը ներդրումային գրավչության բարձրացման ճանապարհով:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ-ում տնտեսական աճի ապահովման մեջ ներդրումների ունեցած կարևորագույն մասնակցությունն է, օտարերկրյա ուղղակի ներդրումների ունեցած ազդեցությունը տնտեսության վրա: Հետազության առարկան՝ ՀՀ-ում ՕՈՒՆ-երի և տնտեսական աճի միջև փոխկապվածության ուսումնասիրությունն է ինչպես տեսականորեն, այնպես էլ վիճակագրական և տնտեսաչափական տեսանկյունից:

Հետազոտության մեթոդաբանությունը, տեսական և էմպիրիկ բազան: Աշխատանքում առաջ քաշած խնդիրների լուծման համար տեսամեթոդաբանական հիմք են հանդիսացել հայրենական և օտարերկրյա աշխատություններում ՕՈՒՆ-երի և տնտեսական աճի միջև փոխակապվածությունը և փոխազդեցությունը ուսումնասիրող աշխատությունները, վերլուծությունները, ներդրումային համաձայնագրերը, օրենսդրությունը, միջազգային կազմակերպությունների ներդրումային և տնտեսական վերլուծությունները և մի շարք գիտական հետազոտությունները:

Ատենախոսական հետազոտությունում օգտագործվել են վիճակագրական, հաշվարկային, համեմատական վերլուծություններ, էկոնոմետրիկ պանելային և ժամանակային շարքերի հետազոտություններ:

Հետազոտական և վերլուծական տվյալների աղբյուր են հանդիսացել միջազգային մի շարք կառույցների, ինչպիսիք են՝ Համաշխարհային բանկի, Միավորված Ազգերի Կազմակերպության, Արժույթի միջազգային հիմնադրամի, և ազգային կառույցների, ինչպիսիք են՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի, Կենտրոնական բանկի, մի շարք նախարարությունների պաշտոնական տվյալները և հրատարակումները, որոնք հղումների տեսքով առանձին ներկայացվում են աշխատությունում:

Ատենախոսության գիտական նորույթը: Սույն հետազոտությունն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն նրանով, որ հնարավորություն է տալիս դիտարկել ՕՈՒՆ-երի և տնտեսական աճի միջև փոխկապվածությունն ինչպես տեսության մոդելների համատեքստում համեմատական և վիճակագրական վերլուծությունների հիման վրա, այնպես էլ տեսական մոդելները պանելային և ժամանակային շարքերի տնտեսաչափական մոդելների տեսքով ներկայացնելու միջոցով: Վերջիններիս արդյունքում ստեղծվում է հնարավորություն ներկայացնել ՕՈՒՆ-երի և տնտեսական աճի միջև փոխկապվածությունը թվային տեսքով տարբեր երկրների և ՀՀ համար:

Ատենախոսությունում կատարված մի շարք վերլուծությունների արդյունքում ներկայացվել են տեսական և գործնական նշանակության արդյունքեր, որոնց հիմնական **գիտական նորույթը** ներկայացնող դրույթներն են՝

1. Պանելային վերլուծության մեջ, ներառելով հետազոտության հետաքրքրության մեջ առկա գործոնները, ստացվել են թվային տեսքով արդյունքեր 87 երկրների համար: Այս վերլուծության առանձնահատկություններից է այն, որ վերջինս հնարավորություն է տալիս արդյունքները դիտարկել առանձին զարգացող և զարգացած երկրների համար: Արդյունքները վկայում են ՕՈՒՆ-երի և տնտեսական աճի միջև առկա դրական փոխկապվածության մասին, ընդ որում զարգացող երկրների դեպքում այդ դրական փոխկապվածությունն ավելի մեծ է, քան զարգացած երկրների դեպքում:

2. Ժամանակային շարքերի վերլուծության հիման վրա ՀՀ օրինակով գնահատվել է ՕՈՒՆ-երի ազդեցությունը տնտեսական աճի վրա, ներկայացվել են կանխատեսումների և հնարավոր արտաքին ազդակների դեպքում այդ փոխկապվածության զարգացման հեռանկարները: Մասնավորապես հաստատվել է ՀՀ-ում ՕՈՒՆ-տնտեսական աճ հարաբերակցության միջև գոյություն ունեցող դրական փոխկապվածությունը: Ընդ որում հետազոտության արդյունքները վկայում են, որ այդ փոխկապվածության զարգացման տենդենցը այլ ազդակների պարագայում նախատեսում է պահպանել կայուն տրենդ:
3. Ատենախոսական աշխատանքի հիմքում դիտարկվել են ՕՈՒՆ-երի՝ տնտեսական աճի վրա ունեցած ոչ միայն ուղղակի, այլև անուղղակի ազդեցությունները: Հետազոտական արդյունքները փաստում են, որ ՀՀ-ում ՕՈՒՆ-երը դրական ազդեցություն կարող են ունենալ տնտեսական աճի վրա նաև անուղղակի՝ նպաստելով համախառն կապիտալի ավելացմանը և արտահանման ծավալների աճին, վերջիններս էլ իրենց հերթին՝ տնտեսական աճին: Միևնույն ժամանակ ՕՈՒՆ-երի միջնորդությամբ ձևավորված տնտեսական աճը իր հերթին հաջորդ ժամանակահատվածում կարող է տնտեսական աճի պատճառ հանդիսանալ: Ընդ որում ՕՈՒՆ-երի շարունակական աճի դեպքում տնտեսական աճի ծավալները կավելանան ինչպես ուղղակիորեն ՕՈՒՆ-երի ազդեցության հետևանքով, այնպես էլ անուղղակիորեն ձևավորված տնտեսական աճի հաշվին: Ձևավորված գործընթացը կարող է դառնալ շղթա, քանի որ ՕՈՒՆ-երը ձևավորում են տնտեսական աճ, իսկ տնտեսական աճը հակադարձ ազդեցության շնորհիվ նպաստում է դեպի երկիր ՕՈՒՆ-երի ծավալների ավելացմանը:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը: Ստացված արդյունքները կարող են կիրառվել Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման ուղղությամբ տարվող քաղաքականության մեջ, կարող են կիրառվել մշակվող հայեցակարգերում և զարգացման ծրագրերում: Աշխատանքի արդյունքերը պիտանի նշանակություն կարող են ունենալ հետագա հետազոտությունների և վերլուծությունների համար: Քանի որ աշխատանքում դիտարկվել են նաև տարբեր երկրների օրինակով ՕՈՒՆ-երի և տնտեսական աճի փոխկապվածությունը, ինչպես նաև ներկայացվել են այդ կապի տեսամեթոդական մեխանիզմները, աշխատանքը կարող է կիրառելի լինել նաև մի շարք միջազգային կազմակերպությունների և վերլուծական կենտրոնների համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումը: Աշխատանքի հիմնական արդյունքները քննարկվել են ԵՊՀ «Տնտեսագիտության և կառավարման» ֆակուլտետի գիտխորհրդի և Երևանի պետական համալսարանի «Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերություններ» ամբիոնի նիստերի ժամանակ: Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի 6 գիտական հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից և հապավումների ցանկից: Ատենախոսության ծավալն առանց հավելվածների և հապավումների կազմում է 132 էջ, և պարունակում է 10 աղյուսակ, 29 գծապատկեր և 26 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է թեմայի գիտական ուսումնասիրվածության աստիճանը, հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակը և խնդիրները, ուսումնասիրության տեսական, մեթոդաբանական հիմքերը և տվյալների հավաքագրման աղբյուրները, ատենախոսության գիտական նորույթը, գործնական նշանակությունը և արդյունքների իրացումը, կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին՝ «Օտարերկրյա ուղղակի ներդրումների և տնտեսական աճի խթանման տեսամեթոդական հիմքերը» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Ուսումնսիրվել են տնտեսական աճի էությունը և տեսակները: Տնտեսական աճը երկրի տնտեսության զարգացման ամփոփ բնութագրիչն է, որը պայմանավորված է ոչ միայն արտադրական ռեսուրսներով, քաղաքականությամբ, օրենսդրությամբ, այլև բազմաթիվ հոգեբանական ու սոցիալական գործոններով: Տնտեսական աճ հասկացության տակ դիտարկվում է տնտեսական և սոցիալական զարգացում: Տնտեսական աճը ուղեկցվում է, հաճախ նաև պայմանավորվում է, արտադրության ծավալների աճով, թողարկվող արտադրանքի ավելացմամբ, ազգային եկամտի աճով: Տնտեսական աճը մշտապես եղել է մի շարք տնտեսագետների հետաքրքրության կենտրոնում, որի հիման վրա մշակվել են տեսական և տնտեսաչափական հետազոտություններ: Տնտեսագետները տնտեսական աճը դիտարկում են տարբեր տեսանկյուններից, որի հիման վրա կարելի է առանձնացնել տնտեսական աճի մի քանի տեսակներ:

Նպատակ ունենալով դիտարկել տնտեսական աճի ձևավորման հիմքերը և առաջացման դրդապատճառները, ներկայացվել են տնտեսական աճի գործոնները, շարժիչ ուժերը:

Տնտեսական աճը պայմանավորված է մի շարք գործոններով: Տնտեսական աճի գործոններ հասկացության ներքո դիտարկվում են այն երևույթներն ու գործընթացները, որոնք տալիս են հնարավորություն ավելացնել արտադրության իրական ծավալները, բարելավել արդյունավետությունը և նպաստել որակի աճին: Տնտեսագիտական գրականության մեջ տնտեսական աճի գործոնները դասակարգվում են՝ ելնելով վերջիններիս բնույթից, ազդեցության ձևերից, մեթոդներից և այլն: Երկրների կողմից տնտեսական աճին ուղղված քաղաքականություններ վարելիս ուշադրություն պետք է դարձվի տվյալ երկրին, տվյալ ժամանակահատվածում և հնարավորությունների առկայության սահմաններում ճշգրիտ գործոնների ընտրությանը, ընդ որում ոչ միայն այն գործոններին, որոնք նպաստում են տնտեսական աճին, այլև տնտեսական աճը զսպող գործոններին:

Առաջին գլխի շրջանակներում ուսումնասիրվել են նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների էությունը, խրախուսման ձևերը և մեթոդները: Ներդրումները տնտեսագիտական գրականության մեջ դիտարկվում են որպես սեփական երկրում կամ օտարերկրյա երկրներում կապիտալի և դրամական միջոցների ներդրում տարբեր ծրագրերի մեջ՝ նպատակ ունենալով ստանալ շահույթ կամ այլ դրական արդյունք: ՕՈՒՆ-երը ոչ միայն ուղղակի ֆինանսական միջոցների ներհոսք են, այլև կարող են հանդես գալ տեխնիկայի և տեխնոլոգիաների, սարքավորումների, նոու-հաուների, կառավարչական և մարքեթինգային հմտությունների տեսքով, որոնք իրենց հերթին կարող են զարգացնել երկրի տնտեսական վիճակը և նպաստել տնտեսական և սոցիալական զարգացմանը: Ելնելով ՕՈՒՆ-երի ունեցած մի շարք դրական ազդեցություններից՝ այսօր երկրների մեծ մասը վարում է ՕՈՒՆ-երի խրախուսման և ներգրավման համար մշակված ռազմավարություններ և քաղաքականություններ: Նախքան ՕՈՒՆ-երի խրախուսման և ներգրավման քաղաքականությունների իրականացման մեխանիզմներ մշակելը, անհրաժեշտ է հասկանալ ՕՈՒՆ-երի հիմնական բնութագիրը, որտեղ և ինչու են կատարվում ՕՈՒՆ-երը, որպեսզի վերջիններիս հիման վրա մշակվեն ճշգրիտ մեխանիզմներ: Նշված ենթագլխում անդրադարձ է կատարվել այդ բոլոր հարցերին:

Ատենախոսության երկրորդ՝ «Օտարերկրյա ուղղակի ներդրումները որպես տնտեսական աճի ապահովման կարևոր բաղկացուցիչ» գլուխը բաղկացած է երկու ենթագլխից: Երկրորդ գլխի շրջանակներում ուսումնասիրվել են ՕՈՒՆ-երը որպես տնտեսական աճ ապահովող առանցքային գործոն: Տարիներ շարունակ ՕՈՒՆ-երի և տնտեսության միջև փոխկապակցվածությունը ոչ միայն կրել է հետազոտական բնույթ, այլև բազմաթիվ երկրներ առաջնորդվել են տեսության արդյունքերով և մշակել են դրանց վրա իրենց տնտեսական քաղաքականությունները: Մի շարք վերլուծաբաններ և

գիտնականներ եկել են այն եզրահանգման, որ ՕՈՒՆ-երը կարող են ունենալ կարևորագույն դրական ազդեցություն այն ընդունող երկրի համար: Նախ և առաջ, ՕՈՒՆ-երը նպաստում են ընդունող երկրում տնտեսական համակարգի փոփոխություններին: Երկրորդ, ՕՈՒՆ-երը նպաստում են ազգային տնտեսության բացվածությանը դեպի միջազգային շուկաներ: Երրորդ, ՕՈՒՆ-երը նպաստում են կառավարման և մարքեթինգային մեթոդների և մեխանիզմների փոխանակմանը, մասնագիտական զարգացվածության աճին, գիտատեխնիկական մեթոդների փոխանակմանը: Չորրորդ, ՕՈՒՆ-երը նպաստում են այն ընդունող երկրում արտադրության ծավալների աճին, զբաղվածության մակարդակի ավելացմանը, աղքատության մակարդակի կրճատմանը, ներքին ապրանքաշրջանառության ծավալների աճին, գիտատեխնիկական զարգացվածությանը: Հինգերորդ, ՕՈՒՆ-երը հիմք են հանդիսանում նոր արտադրական և ձեռնարկատիրական գործունեությունների ծավալման համար՝ նպաստելով փոքր և միջին բիզնեսի զարգացմանը և մրցունակության բարձրացմանը: Վեցերորդ, ՕՈՒՆ-երի մուլտիպլիկացիոն էֆֆեկտը կարող է բերել ներդրումային ցիկլի, որը դրականորեն կազդի ոչ միայն արտադրության վրա, այլև տնտեսության մյուս ոլորտների վրա:

Էմպիրիկ միջճյուղային հետազոտության միջոցով ուսումնասիրվել են ՕՈՒՆ-երի ազդեցությունը տնտեսական աճի վրա երկրների օրինակով: Նպատակ ունենալով դիտարկել «ՕՈՒՆ-տնտեսական աճ» փոխկապվածությունը ոչ միայն տեսականորեն, իրականացվել է էմպիրիկ միջճյուղային հետազոտություն՝ 87 երկրների համար:

Տվյալները ձեռք են բերվել Համաշխարհային Բանկի տվյալների բազայից՝ 87 զարգացող և զարգացած երկրների համար (ընդ որում վերլուծության մեջ զարգացած և զարգացող երկրները դիտարկվել են որպես ներդրվող (dummy) փոփոխական)՝ նպատակ ունենալով ուսումնասիրել «ՕՈՒՆ-տնտեսական աճ» հարաբերությունը ըստ երկրների առանձին խմբերի: Զարգացող երկրների շարքում ընդգրկվել է նաև Հայաստանը: Ժամանակահատվածը ընտրվել է 2001-2016թթ.-ը:

Արդյունքում 16 տարվա կտրվածքով 87 երկրների համար, մեկ կախյալ և հինգ անկախ փոփոխականների միջոցով ստացվել է պանելային տվյալների շարք՝ 1392 դիտումների քանակով:

Պանելային վերլուծությունում որպես կախյալ ցուցանիշ հանդես է գալիս տնտեսական աճը, որպես անկախ ցուցանիշներ դիտարկվել են ՕՈՒՆ (FDI), համախառն կապիտալի կուտակումը (GCF), բնակչության աճը (PG), ապրանքների և ծառայությունների արտահանումը (EGS) և ներմուծվող (dummy) փոփոխականը, որը խմբավորում է երկրները ըստ զարգացած և զարգացող (Developing) երկրների: Վերլուծությունը սկսելուց առաջ, նախևառաջ, իրականացվել է Հաուսմանի թեստը՝ ստուգելու համար՝ արդյոք շեղումները կորելացված են ռեգրեսորների հետ:

Թեստի արդյունքները ներկայացրել են, որ անհրաժեշտ է կիրառել պատահական էֆֆեկտներով մոդել: Ինչը նշանակում է, որ մոդելում երկրների միջև փոփոխությունը պատահական է և կորելացված չէ կախյալ և անկախ փոփոխականների հետ:

Ստուգելով մոդելի ճշգրտությունը՝ ի սկզբանե ստուգվել է երկրների միջև նշանակալի տարբերությունների առկայությունը: Լագրանժի բազմապատկիչ թեստի միջոցով երկրների միջև նշանակալի տարբերությունների դիտարկման ստուգումը ցույց է տվել, որ զրոյական հիփոթեզը ժխտվում է, և հաստատվում է, որ երկրների միջև գոյություն ունի նշանակալի տարբերություն, ինչը ևս մեկ անգամ հաստատվում է պատահական էֆեկտներով մոդելի կիրառման անհրաժեշտությունը: Երկրների միջև շեղումների կորրելացման թեստի ստուգումը ցույց է տվել, որ զրոյական հիփոթեզը ժխտվում է և հաստատվում է, որ երկրների միջև շեղումները կորելացված են:

Մոդելում սերիական կորելացման առկայությունը ստուգելու համար իրականացվել է Լագրամ-Մալթիփլայեր թեստ, որի արդյունքներով հաստատվել է զրոյական հիփոթեզը, այն մասին, որ մոդելում առկա է առաջին աստիճանի սերիական կորրելացում:

Արդյունքում, ունենալով գծային փոխկապակցվածություն և սերիական կորրելացում, մոդելը կարիք է առաջացել սահմանել ճշգրտված ստանդարտ շեղումների ցուցանիշներ: Ճշգրտումից հետո փոփոխականների գործակիցները նույնն են մնում, սակայն մնացած արժեքները փոփոխվել են, քանի որ երբ կորրելացման խնդիրը չի դիտարկվում, նշված արժեքները կարող են լինել ավելի փոքր, քան դրանք ճշգրտելուց հետո:

Աղյուսակ 1

Սահմանված ռեգրեսիոն մոդել (ճշգրտումից հետո)

Դիտումների քանակ = 1392
Խմբերի քանակ = 87
Wald chi2(5) = 172.08
Prob > F = 0.0000
within R-squared = 0.4417

Variables	Coeficient****	Coeficient	STD.****	STD.	P-Value****	P-Value
FDI	.0154014	.0154014	. 0081684	.0068589	0.059	0.025
GCF	.3989079	.3989079	.0342613	.0111745	0.000	0.000
PG	.0355291	.0355291	.1687919	.1367399	0.833	0.795
EGS	.0459274	.0459274	.0207504	.0119503	0.027	0.000
Developing	1.882515	1.882515	.9710873	.8844067	0.053	0.033
Հաստատուն փոփոխական (Constant)	-8.472476	-8.472476	1.360222	.9873997	0.000	0.000

****-ով սահմանված են ճշգրտված ցուցանիշները

Ճշգրտումից հետո փոփոխականների մեծ մասը կրկին նշանակալի է և մոդելը դառնում է ճշգրտված: Մոդելի արդյունքները ցույց են տալիս, որ օտարերկրյա ուղղակի ներդրումների մեկ միավոր աճը հանգեցնում է 0.015 միավորով տնտեսական աճին: Դա նշանակում է, որ մոդելում առկա է դրական փոխկապակցվածություն ՕՈՒՆ-երի և տնտեսական աճի միջև: Այսինքն՝ ՕՈՒՆ-երի աճը բերում է տնտեսական աճի ցուցանիշի ավելացմանը: Ընդ որում՝ ստացված ցուցանիշը վիճակագրորեն նշանակալի է:

Երկրների դասակարգման դեպքում ակնհայտ է դառնում այն հանգամանքը, որ այն դեպքում, երբ երկիրը զարգացող է, 1.882 միավորով մեծանում է տնտեսական աճի վրա դրական ազդեցության հավանականությունը, ընդ որում ստացված արդյունքը ևս վիճակագրորեն նշանակալի է: ՀՀ-ն, լինելով զարգացող երկիր, ևս նշված դիտարկման հիմքում է և կարող է ՕՈՒՆ-երի ներգրավման քաղաքականության արդյունքում էականորեն բարելավել երկրի տնտեսությունը և ապահովել տնտեսական աճ:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ տնտեսական աճի ապահովումը ներդրումային գրավչության բարձրացման ճանապարհով» գլուխը բաղկացած է չորս ենթագլխից: Երրորդ գլխի շրջանակներում դիտարկվում են Հայաստանի մրցակցային առավելությունները ներդրումների ներգրավման հարցում:

Հայաստանը, լինելով տարածաշրջանով և բնակչության թվաքանակով փոքր երկիր, ունենալով բնական ռեսուրսների սահմանափակ քանակություն, տարածաշրջանային և աշխարհագրական դիրքի խնդիրներ, այդուհանդերձ, ունի մի շարք առավելություններ և հնարվորություններ օտարերկրյա ներդրողների համար գրավիչ, շահութաբեր և

վստահելի լինելու համար: Այն կազմակերպությունները, որոնք ցանկանում են, կամ որոնց գործունեության շրջանակները ծավալվում են Եվրոպական, նախկին ԽՍՀՄ, իրանյան շուկայի, Եվրասիական միության տարածաշրջաններում, զգալիորեն կկրճատեն իրենց ծախսերը Հայաստանյան տնտեսությունում ներդրումներ կատարելու արդյունքում:

Հայաստանում առկա են ներդրումների իրականացման մի շարք զարգացման ենթակա և նպաստավոր ոլորտներ: Երկիրը գտնվում է առևտրային հնարավորությունների մեծ խաչմերուկում: Առկա են բորոր հնարավորությունները դյուրին և արագ ԱՊՀ-ի և Միջին Արևելքի շուկաներ դուրս գալու համար: Հայաստանյան շուկայի կարևորագույն հատկանիշներից է որակյալ, կրթված և էժան աշխատուժը, հատկապես տեխնոլոգիաների, առանձնապես ինֆորմացիոն տեխնոլոգիաների, ինժիներական գիտության, առողջապահության, բնական գիտությունների, ոսկերչության, տեքստիլի և այլ ոլորտերում: Երկրի տնտեսությանը բնորոշ է արագ վերականգնվելու և աճելու հնարավորություն:

ՀՀ-ում ներդրումների տեսանկյունից ամենագրավիչ պայմաններից է օրենսդրական համակարգի առկայությունը, որը կարգավորում է ներդրողների շահերը և գործունեությունը: ՀՀ-ն օտարերկրյա ներդրումների խրախուսման համար մշակել և յուրաքանչյուր տարի կատարելագործում է ներդրումային համակարգը: Սփյուռքի առկայությունը մշտապես իր դրական ազդեցությունն է ունեցել երկրի համար: Հատկապես սփյուռքի անմիջական մասնակցությունը նկատելի դարձավ 1991թ.-ից հետո, որը ավելի շատ օգնության տեսք էր կրում: Այսօր արդեն Սփյուքի կողմից գումարային հատկացումները ներդրումների տեսք ունեն:

ՀՀ կողմից առաջարկվող հարկային արտոնությունները ներդրողների համար գրավիչ են և նպաստավոր: ՀՀ-ում սահմանված են հարկային արտոնություններ մի շարք ոլորտներում, ինչպիսին է SS ոլորտը, ընտանեկան գործունեությունը, փոքր և միջին բիզնեսը, ինչպես նաև սահմանվում են արտոնյալ պայմաններ սահմանամերձ տարածաշրջաններում կամ մեծածավալ արտահանում իրականացնող կազմակերպությունների համար:

ՀՀ անդամակցությունը միջազգային կազմակերպություններին, ինչպես նաև շուկայի ու տնտեսության բացվածությունը և տնտեսության թափանցիկ գործունեությունը, արտարժույթի ազատ փոխանակումը և կայուն ազգային արժույթի առկայությունը մեծ վստահություն են առաջացնում ներդրողների մոտ երկրում ներդրումային գործունեություն ծավալելու համար: Հայաստանում առկա են բիզնես գործունեություն ծավալելու գրեթե բոլոր նպաստավոր պայմանները: Այդ փաստն են հաստատում նաև տնտեսական ազատության, գլոբալ մրցունակության և բիզնես գործունեություն ծավալելու մասին միջազգային ցուցանիշները:

Դիտարկվել են նաև ՀՀ-ում ներդրումների ներգրավման գործում խոչընդոտող գործոնները: Չնայած, որ երկրում իրականացվում են մի շարք միջոցառումներ, և տարվում է պետական քաղաքականություն՝ ներդրումների ներգրավման ծավալները մեծացնելու նպատակով, այդուհանդերձ, այսօր առկա են մի շարք խնդիրներ, որոնք խոչնդոտում և նվազեցնում են դեպի երկիր ներդրումների ծավալը: Դրանցից են՝ երկրում քաղաքական և ռազմաքաղաքական անկայունության առկայությունը, տնտեսական շրջափակումը, հարևան երկրների տնտեսական և քաղաքական անկայունությունը, ներքին փոքր շուկան, վառելիքահումքային ռեսուրսների սահմանափակվածությունը, ենթակառուցվածքային համակարգի անկայունությունը, օրենսդրական համակարգի անկայունությունը, աշխատուժի արտագաղթը, մրցակցային շուկայի սահմանափակումները, կոռուպցիայի մակարդակը և ստվերային տնտեսության առկայությունը:

Ուսումնասիրվել են ՀՀ տնտեսության մեջ օտարերկրյա ուղղակի ներդրումների դինամիկան և հիմնական միտումները: ՀՀ տնտեսության մեջ ՕՈՒՆ-երը մշտապես ունեցել են նշանակալի դեր և ազդեցություն: Տնտեսության վրա ՕՈՒՆ-երի ազդեցությունը հատկապես ակնհայտ է եղել 90-ական թվականներին, երբ ՕՈՒՆ-երը կազմել են հիմնական համախառն կապիտալի գերակա մասը:

Թեև ՀՀ-ն աշխարհում ՕՈՒՆ-երի ներգրավվածության մակարդակով առաջատար երկրներից չէ, այդուհանդերձ, ՀՀ-ում կատարված ընդհանուր ներդրումների մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն ՕՈՒՆ-երը:



Գծապատկեր 1. ՀՀ-ում ՕՈՒՆ-երի ներհոսքի մասնաբաժինը ընդհանուր ներդրումների մեջ, %[1]

ՀՀ-ում օտարերկրյա ուղղակի ներդրումների մեծ մասը բաժին է ընկնում Ռուսաստանին: 2007-2011թթ. Ռուսաստանին է բաժին ընկել ՀՀ-ում կատարված ՕՈՒՆ-երի կեսից ավելին:



Գծապատկեր 2. Ռուսաստանից Հայաստան ՕՈՒՆ-երի ներհոսքերի մասնաբաժինը ընդհանուր ՕՈՒՆ-երի մեջ, %[1]

ՀՀ-ում 2007-2015 թթ. ընկած ժամանակահատվածում ՕՈՒՆ-երի մեծ մասը բաժին է ընկել էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման և հեռահաղորդակցության ոլորտներին: ՀՀ-ում մեծ քանակությամբ ՕՈՒՆ-եր են հատկացվում նաև խմիչքների արտադրությանը, հանքագործունեությանը, անշարժ գույքի ոլորտին և օդային տրանսպորտի գործունեությանը:

ՕՈՒՆ-երի ներգրավմամբ առաջատար ոլորտներում ամենաակտիվ դրսևորումն են իրականացնում Ռուսաստանի Դաշնությունը, Ֆրանսիան, Միացյալ Թագավորությունը, Գերմանիան, Լիբանանը, Շվեյցարիան և Լյուքսեմբուրգը:

[1] Գծապատկերը կառուցվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության http://www.armstat.am/am/ կայքի տվյալների հիման վրա:

Խմիչքների ոլորտում ՕՈՒՆ-երի մեծ մասը բաժին է ընկնում Միացյալ Թագավորությանը, հանքագործության ոլորտում՝ Շվեյցարիային, հեռահաղորդակցության և էլեկտրականության ու գազի ոլորտում՝ Ռուսաստանի Դաշնությանը, անշարժ գույքի ոլորտում ՕՈՒՆ-երի միայն մեկ տոկոսն է բաժին ընկնում ՌԴ-ին, մնացած ներդրումները ձևավորում են տասնյակից ավել երկրներ: Աշխատանքում ներկայացվել են նաև ՀՀ օրինակով ՕՈՒՆ-երի՝ տնտեսական աճի վրա ազդեցության արդյունավետության բարձացման հեռանկարները՝ ըստ ժամանակային շարքերի վերլուծության:Պարզելու համար, թե ՀՀ օրինակով ՕՈՒՆ-երը ինչպիսի ազդեցություն ունեն տնտեսական աճի վրա և ինչպիսին կարող է լինել վերջիններիս հետագա ազդեցությունը, իրականացվել է ժամանակային շարքերի էկոնոմետրիկ վերլուծություն:

Վերլուծության համար որպես ժամանակահատված դիտարկվել է 2001թ. առաջին եռամսյակից մինչև 2017թ. առաջին եռամսյակ ընկած ժամանակահատվածը: Ժամանակահատվածը իր հերթին դիտարկվել է եռամսյակային տեսքով, ինչի արդյունքում ստացվել է 65 դիտումների քանակ: Վերլուծությունում որպես կախյալ փոփոխական տնտեսական աճի մեծությունն է, որպես անկախ փոփոխական դիտարկվում է օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքը (FDI), բնակչության աճի տեմպը (PG), համախառն կապիտալի կուտակումը (GCF), ապրանքների ու ծառայությունների ներմուծումը (Imp) և ապրանքների ու ծառայությունների արտահանումը (Exp): Մոդելի արդյունքները վկայում են, որ՝

1. ՀՀ-ում ՕՈՒՆ-տնտեսական աճ հարաբերակցության միջև գոյություն ունի փոխկապակցվածություն և այդ կապը դրական է: Ընդ որում՝ մեկ միավոր ՕՈՒՆ-երի ներհոսքի ավելացումը բերում է 0.05 միավորով տնտեսական աճի ավելացմանը:

Աղյուսակ 2

Գծային ավտոռեգրեսիվ մոդել

	EG	GCF	D.FDI	Pop	Exp	Exp
EG	.4706402 ***	.1848752	.1023407	-.1165425	-.7184228 *	-.2409123
S.E.	(.171649)	(.4103142)	(.2027114)	(.1088401)	(.3918341)	(.3499091)
GCF	.107785 *	.6858207 ***	.2085982	.0294907	.1485617	.2567371 *
S.E.	(.0725627)	(.1734558)	(.085694)	(.046011)	(.1656436)	(.1479203)
D.FDI	.0590032 *	-.2763601	.2879447	.0702675	.3989496 *	.1123284
S.E.	(.0997847)	(.238528)	(.1178422)	(.063272)	(.227785)	(.2034127)
Pop	-.072085	-.2452812	.1750351	.3929394 ***	-.8905473 **	-.3262663
S.E.	(.1714024)	(.4097248)	(.2024202)	(.1086837)	(.3912712)	(.3494065)
Exp	.0438839 *	-.0171645	.1249055 **	-.0537269 *	.6240393 ***	.1220835
S.E.	(.0504798)	(.1206683)	(.0596149)	(.0320085)	(.1152335)	(.1029039)
Imp	-.0191624	.0505828	-.1109308	-.0365829	-.1114226	.3949359 ***
S.E.	(.0721484)	(.1724653)	(.0852047)	(.0457482)	(.1646977)	(.1470756)
Constant	2.227631**	.7540684	-1.688854	.4181244	6.878233 ***	.8075478
S.E.	(1.045912)	(2.500174)	(1.235185)	(.6631971)	(2.387569)	(2.132107)

* 90%, ** 95%, *** 99%

2. «ՕՈՒՆ-տնտեսական աճ» փոխկապակցվածության զարգացման միտումը այլ ազդակների պարագայում որոշ կարճ զարգացումից հետո ակնկալում է պահպանել կայուն տրենդ, ինչը վկայում է այն մասին, որ ՕՈՒՆ-երի ներհոսքը ՀՀ ներդրողների տեսանկյունից կլինի ոչ ռիսկային, իսկ երկրի տնտեսության համար կարող է ունենալ նշանակալի դրական ազդեցություն:
3. Մոդելի արդյունքները հիմք են հանդիսանում եզրակացնել, որ ՕՈՒՆ-տնտեսական աճ փոխազդեցության նախկինում անընդհատ դրական աճելը և հետագայում կայուն տեմպերի կանխատեսումը ՀՀ ներդրումային միջավայրի գրավչություններից կարող է հանդիսանալ՝ երկրում երկարաժամկետ և լայնածավալ ներդրումներ կատարելու տեսանկյունից:



Գծապատկեր 3. Ազդակ-պատասխան թեստ

4. Քանի որ ՕՈՒՆ-երը իրենք իրենցով կարող են հիմք հանդիսանալ համախառն կապիտալի ձևավորման գործում և նպաստեն արտահանման ծավալների ավելացմանը, իսկ ինչպես մոդելի արդյունքներն են վկայում, տնտեսական աճի և համախառն կապիտալի կուտակման և ապրանքների և ծառայությունների արտահանման միջև գոյություն ունի դրական փոխկապակցվածություն, ապա ստացվում է, որ ՕՈՒՆ-երը դրական ազդեցություն կարող են ունենալ տնտեսական աճի վրա ոչ միայն ուղղակի, այլև անուղղակի՝ նպաստելով համախառն կապիտալի ավելացմանը և արտահանման ծավալների աճին, վերջիններս էլ իրենց հերթին տնտեսական աճին:
5. ՕՈՒՆ-երը տնտեսական աճի երկարաժամկետ ապահովման գործոններ են: Ասվածը բացատրվում է նրանով, որ դիտարկվող ժամանակահատվածում ՕՈՒՆ-երի միջնորդությամբ ձևավորված տնտեսական աճը իր հերթին հաջորդ ժամանակահատվածում կարող է տնտեսական աճի պատճառ հանդիսանալ: Ընդ որում ՕՈՒՆ-երի շարունակական աճի դեպքում տնտեսական աճի ծավալները կավելանան ինչպես ուղղակիորեն ՕՈՒՆ-երի ազդեցության հետևանքով, այնպես էլ անուղղակիորեն ձևավոևված տնտեսական աճի հաշվին: Ձևավորված գործընթացը կարող է դառնալ շղթա, քանի որ ՕՈՒՆ-երը ձևավորում են տնտեսական աճ, իսկ տնտեսական աճը հակադարձ ազդեցության շնորհիվ նպաստում է դեպի երկիր ՕՈՒՆ-երի ծավալների ավելացմանը:

Նշված եզրահանգումները փաստում են, որ արդարացված են դեպի երկիր օտարերկրյա ուղղակի ներդրումների համար մշակված բոլոր ռազմավարությունները:

Ատենախոսության «**Եզրակացություն**» բաժնում ներկայացվում են հետազոտության հիմնական արդյունքները, որոնք, մասնավորապես, հետևյալն են՝

Տնտեսական աճի մոդելների մեծ մասը անկասկած ցույց են տալիս, որ այն կարող է բոլոր երկրների համար տալ տնտեսական օգուտներ: Այդ է պատճառը, որ տնտեսական աճի ապահովումը յուրաքանչյուր երկրի տնտեսական քաղաքականության ամենակարևոր դերերից է համարվում: Սակայն, տնտեսական աճի ապահովումը իրենով պայմանավորված է մի շարք գործոններով և նախադրյալներով: Չնայած տնտեսական աճին նպաստող գործոնները և շարժիչ ուժերը բազմաթիվ են և տարբեր, այդուհանդերձ, տնտեսագիտական գրականության մեջ առանձնացվում է օտարերկրյա ուղղակի ներդրումների ունեցած կարևոր նշանակությունը տնտեսական աճի ապահովման գործում: Նշվածը բացատրվում է նրանով, որ ՕՈՒՆ-երը նպաստում են հավելյալ արտադրական կապիտալի ձևավորմանը, ազգային և միջազգային տնտեսությունների ինտեգրմանը, փորձի, կառավարման և մարքեթինգային հմտությունների, ԳՏԱ, տեխնիկայի, տեխնոլոգիաների և նորամուծությունների փոխանակմանը, արտադրության ծավալների աճին, աղքատության կրճատմանը և զբաղվածության մակարդակի ավելացմանը և մի շարք այլ տնտեսական օգուտների, որոնք ստեղծում են տնտեսական աճի ձևավորման բոլոր նախադրյալները: Ելնելով այդ հանգամանքից՝ տնտեսական աճի ապահովման համար յուրաքանչյուր երկիր պետք է մշակի իր տնտեսությանը բնորոշ և նպատակահարմար ռազմավարություններ և մեխանիզմներ:

Օտարերկրյա ուղղակի ներդրումների՝ տնտեսական աճի վրա ունեցած հնարավոր ազդեցության ուսումնասիրությանը նվիրված սույն աշխատությունում կատարված հետազոտությունները թույլ են տալիս կատարել մի շարք եզրահանգումներ, որոնք ներկայացնենք ստորև՝

- Տնտեսական աճի ձևավորմանը նվիրված բոլոր տեսական մեկնաբանություններում հետազոտողները կարևորում են նախադրյալների ուսումնասիրությունը և առկա բոլոր հնարավորությունների գնահատումը: Այդ իսկ պատճառով տնտեսական աճի ապահովմանն ուղղված քաղաքականություն մշակելիս, նախևառաջ, անհրաժեշտ է տարբերակել և հասկանալ, թե տվյալ տնտեսությանը տնտեսական աճի որ ձևն է անհրաժեշտ, ուսումնասիրել վերջինիս առանձնահատկությունները, նպաստող գործոնները և շարժիչ ուժերը, դիտարկել տվյալ պայմանում տվյալ երկրի տնտեսական հնարավորությունները, անհրաժեշտ գործոնների ձեռք բերման հնարավորությունները և համախմբելով վերոնշյալը մշակել համապատասխան ռազմավարություն և քաղաքականություն:
- Օտարերկրյա ուղղակի ներդրումները տնտեսության վրա կարող են ունենալ մի շարք դրական ազդեցություններ: Տնտեսագիտական գրականության մեջ դա բացատրվում է մի շարք եղանակներով: Տարբերում են ՕՈՒՆ-երի՝ տնտեսության վրա ունեցած ազդեցության երեք հիմնական մեթոդներ՝
  - ✓ Չափի ազդեցություն, երբ ՕՈՒՆ-երը նպաստելով խնայողությունների մեծացմանը, հանգեցնում են թողարկվող արտադրանքի ծավալների աճին,
  - ✓ Հմտությունների և տեխնոլոգիաների ազդեցություն, երբ փորձի փոխանակման և նորագույն տեխնոլոգիաների միջոցով ՕՈՒՆ-երը նպաստում են տնտեսական աճի ձևավորմանը,
  - ✓ Կառուցվածքային ազդեցություն, երբ ներքին և արտաքին շուկաների փոխկապվածության ձևավորման արդյունքում ստեղծվում են նոր շուկաներ, մեծանում է մրցակցությունը, զարգանում է արտադրական գործունեությունը և այլն:

Հատկապես առանձնացվում են ՕՈՒՆ-երի տնտեսության վրա դրական ազդեցության հետևյալ հետևանքները՝

- ✓ ՕՈՒՆ-երը նպաստում են հավելյալ արտադրական կապիտալի ձևավորմանը, որը իր հերթին հանգեցնում է ընդունող երկրում տնտեսական համակարգի փոփոխություններին,
- ✓ ՕՈՒՆ-երը միջնորդ են հանդիսանում ազգային և միջազգային տնտեսությունների համագործակցության համար: Դրանով իսկ նպաստում են միջազգային շուկայում ազգային տնտեսության ընդգրկմանը, ճանաչմանը, արտաքին առևտրաշրջանառության ծավալների մեծացմանը,
- ✓ ՕՈՒՆ-երը ոչ միայն ֆիանանսական միջոցների ներհոսքեր են, այլև վերջիններս կարող են հանդես գալ տեխնիկայի, տեխնոլոգիայի և նորամուծությունների տեսքով: ՕՈՒՆ-երը բարձրացնում են ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, քանի որ հիմք են հանդիսանում կառավարման և մարքեթինգային մեխանիզմների փոխանակմանը, մասնագիտական զարգացվածության աճին, գիտատեխնիկական մեթոդների փոխանակմանը,
- ✓ ՕՈՒՆ-երը նպաստում են արդյունաբերական և ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը, գործազրկության մակարդակի կրճատմանը, ներքին ապրանքաշրջանառության ծավալների աճին՝ այս ամենով նպաստելով նաև տվյալ երկրի միջազգային շուկաներում մրցակցային դիրքի ավելացմանը,
- ✓ Օտարերկրյա ուղղակի ներդրումները նպաստում են ներքին ներդրումների ավելացմանը և հակառակը: Այս շրջանը իրենում նպաստում է եկամտի ավելացմանը, զբաղվածության մակարդակի ավելացմանը և այլն:

Վերոնշյալ արդյունքները վկայում են այն մասին, որ ՕՈՒՆ-երի խրախուսմանն ուղղված ռազմավարությունները պետք է լինեն կոնկրետացված, այսինքն՝ պետք է առանձնացվեն տնտեսության այն ոլորտները և ճյուղերը, որոնք ենթակա են զարգացման և որոնց զարգացումը կնպաստի տնտեսության բարելավմանը և ներդրումները ուղղորդել այդ ոլորտ, որից ստացված արդյունքները արդեն շղթայական բնույթով կնպաստեն տնտեսական աճին:

- Ընդհանուր առմամբ, ՕՈՒՆ-երը տնտեսական աճի վրա ազդում են երկու հիմնական մեխանիզմով՝ *ուղղակի ազդեցություն* և *անուղղակի ազդեցություն*: Ուղղակի ազդեցության դեպքում ՕՈՒՆ-երը անմիջականորեն նպաստում են տնտեսական աճի ձևավորմանը, այսինքն, ուղղակիորեն ազդելով կապիտալի և աշխատուժի վրա, ձևավորում են ավելի մեծ քանակությամբ թողարկվող արտադրանք: Իսկ անուղղակի ազդեցության դեպքում ՕՈՒՆ-երը օգտագործելով չորս հիմնական լծակները, որոնք են՝ մրցակցությունը, կապերը, հմտությունները և ընդօրինակումը, ազդում են ներքին ներդրումների վրա, որոնք իրենց հերթին նպաստում են տնտեսական աճի: Տնտեսագիտական գրականության մեջ ընդունված է նաև տարբերակել *հակադարձ ազդեցությունը,* երբ տնտեսական աճի առկայությունը հիմք է հանդիսանում դեպի տվյալ երկիր ՕՈՒՆ-երի մեծ հոսքի ավելացմանը, որն էլ իր հերթին կրկին նպաստում է տնտեսական աճի ձևավորմանը: Այսիքն, ձևավորվում է անընդհատ շղթա, որի ծավալները կրում են աճելու միտում:

ՕՈՒՆ-երի՝ տնտեսական աճի վրա ունեցած ազդեցության մեխանիզմները հնարավորություն են տալիս ընտրել այն մեթոդը, որը նպատակահարմար է ժամանակի տվյալ հատվածում տվյալ երկրի համար: Ընդհանուր առմամբ նշված երեք մեխանիզմները փոխկապված են իրար հետ, դա նշանակում է, որ ցանկցած մեկի լրիվ կատարման դեպքում երկրի տնտեսությունը կընկնի շարունակական ցիկլի մեջ, որը կհանգեցնի տնտեսության զարգացմանը յուրաքանչյուր անգամ ավելի մեծ տեմպերով:

- Պանելային տնտեսաչափական վերլուծությունը, որը կատարվել է 87 երկրների օրինակով, հաստատում է այն տեսական փաստը, որ ՕՈՒՆ-երը և տնտեսական աճը ունեն դրական փոխկապվածություն: Ընդ որում

օտարերկրյա ուղղակի ներդրումների 1 միավորով աճը հանգեցնում է տնտեսական աճի ավելացմանը 0.015 միավորով և ստացված ցուցանիշը վիճակագրորեն նշանակալի է: Այս ցուցանիշը տնտեսական աճի դեպքում բավականին մեծ ցուցանիշ է հատկապես այն պարագայում, որ ՕՈՒՆ-երը իրենցով նպաստում են նաև տնտեսության այլ ոլորտների զարգացմանը և նպաստում են այնպիսի ցուցանիշների ավելացմանը, որոնք իրենց հերթին ևս նպաստում են տնտեսական աճի ձևավորմանը, ինչպիսին, օրինակ, մոդելում դիտարկվող մնացած ցուցանիշներ են՝ ապրանքների և ծառայությունների արտահանումը, բնակչության աճի տեմպը և համախառն կապիտալի կուտակումը: Մոդելում դիտարկվող այդ ցուցանիշները ևս նպաստում են տնտեսական աճի ավելացմանը: Այսինքն, փաստացի ստացվում է, որ ՕՈՒՆ-երը նպաստում են տնտեսական աճին ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակի: Նշված վերլուծության էական արդյունքներից է նաև այն, որ զարգացող երկրների դեպքում այդ դրական փոխկապվածությունը կարող է ավելի մեծ լինել: Քանի որ ՀՀ-ն ևս դասվում է զարգացող երկրների շարքին, ստացված այս արդյունքը ևս կարող է էական հիմք հանդիսանալ երկրում ներդրումային քաղաքականության մշակման և զարգացման հարցում:

- Դիտարկելով տեսական և վերլուծական գրականաությունում առանձնացված ՕՈՒՆ-երի ներգրավման հիմնական նախապայմանները և աշխատանքում ՀՀ օրինակով համապատասխան վերլուծություն իրականացնելով՝ անկնհայտ է դարձել այն փաստը, որ ՀՀ տնտեսությունը օժտված է մի շարք առավելլություններով և գրավչություններով, որոնք կարող են մեծացնել դեպի երկիր ՕՈՒՆ-երի ներհոսքերի ծավալները: Ստորև ներկայացնենք այն հիմնական առանձնահատկությունները, որոնք առավել մանրամասն ներկայացվել են ատենախոսությունում՝
  - ✓ Երկիրը գտնվում է առևտրային հնարավորությունների մեծ խաչմերուկում,
  - ✓ Որակյալ, կրթված և էժան աշխատուժի առկայությունը,
  - ✓ Երկրի տնտեսությանը բնորոշ են արագ վերականգնվելու և աճելու հնարավորություններ,
  - ✓ Օտարերկրյա ներդրումների մասին օրենքի առկայությունը,
  - ✓ Սփյուռքի առկայությունը,
  - ✓ Հարկային և այլ արտոնությունների առկայությունը,
  - ✓ Մի շարք միջազգային կազմակերպություններին անդամակցությունը,
  - ✓ Շուկայի և տնտեսության բացվածությունը և տնտեսության թափանցիկ գործունեությունը,
  - ✓ Արտարժույթի ազատ փոխանակումը և կայուն ազգային արժույթի առկայությունը,
  - ✓ Բիզնես գործունեության նպաստավոր պայմանները:
- Չնայած նշված մի շարք առավելությունների, այսօր ՀՀ-ում դեռևս առկա են խնդիրներ, որոնք խոչնդոտում են դեպի երկիր ներդրումների ներգրավման ծավալների մեծացմանը: Այդ տեսանկյունից առանձնացվում են հատկապես մի քանի ոլորտներ և ճյուղեր, որտեղ անհրաժեշտ է իրականացնել միջոցառումներ նշված խոչնդոտները վերացնելու համար: Ստորև ներկայացնենք դրանք՝
  - ✓ Իրավական և օրենսդրական համակարգի բարելավում և հստակեցում,
  - ✓ Ստվերային տնտեսության և կոռուպցիայի մակարդակի նվազեցում,
  - ✓ Ենթակառուցվածքային համակարգերի ստեղծում և զարգացում,
  - ✓ Մենաշնորհի դեմ պայքար,
  - ✓ Քաղաքական ռիսկերի նվազեցում,

✓ Հայաստանի ներդրումային վարկանիշի բարձրացում:

Երկրի ներդրումային գրավչությունը մեծացնելու համար անհրաժեշտ է ստեղծել նոր ներդրումային գործակալություններ, որոնք կզբաղվեն երկրի ներդրումային հնարավորությունները միջազգային շուկաներում ներկայացնելու խնդրով, կմշակեն ռազմավարական ծրագրեր դեպի գերակա ոլորտներ կամ այն ոլորտներ, որոնց զարգացման արդյունքում երկիրը կակնկալի զգալի օգուտներ, ներդրումների ներգրավվածության մեծացման համար, կզբաղվեն ներդրողների ուսումնասիրմամբ, խմբավորմամբ, վերջիններիս հետաքրքրող ոլորտներով և համապատասխան առաջարկներ կներկայացնեն ՀՀ-ում ներդրումների ապահովման համար:

- Ուսումնասիրելով ՀՀ-ում ՕՈՒՆ-երի վիճակագրությունը՝ ակնհայտ է դառնում այն հանգամանքը, որ երկրում կատարված ընդհանուր ներդրումների մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն ՕՈՒՆ-երը: Ընդհանուր ներդրումների մեջ ՕՈՒՆ-երի ունեցած բավականին մեծ մասաբաժնի մասին է խոսում նաև ՕՈՒՆ-երի ներհոսքի մաքուր պաշարների ցուցանիշը: Օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերը ՀՀ-ում տարիների ընթացքում չեն ունեցել կայուն տրենդ, մշտապես դրսևորվել են տատանումներով: ՀՀ-ում ՕՈՒՆ-երը ունեն մեծ տեսակարար կշիռ ինչպես համախառն կապիտալում, այնպես ՀՆԱ մեջ: Չնայած այդ հանագամանքի, այդուհանդերձ, ՀՆԱ մեծության փոփոխությունը միշտ չէ որ պայմանավորված է եղել ՕՈՒՆ-երի զուտ ներհոսքի կամ արտահոսքի մեծության փոփոխությամբ: Ի տարբերություն նշված հանգամանքի՝ ՀՆԱ մեծությունը և ՕՈՒՆ-երը գրեթե միշտ ունեցել են նույն տրենդը, այսինքն՝ փաստացի ՀՆԱ ցուցանիշի աճը գրեթե միշտ ուղեկցվել է ՕՈՒՆ-երի զուտ ներհոսքի աճով և հակառակը:

ՀՀ-ում օտարերկրյա ուղղակի ներդրումների մեծ մասը բաժին է ընկնում Ռուսաստանին: ՀՀ-ում 2007-2015թթ. ընկած ժամանակահատվածում ՕՈՒՆ-երի մեծ մասը բաժին է ընկել էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման և հեռահաղորդակցության ոլորտներին: ՀՀ-ում կատարված ՕՈՒՆ-երի մեծ ծավալով աչքի են ընկնում Ռուսաստանի Դաշնությունը, Ֆրանսիան, Միացյալ Թագավորությունը, Գերմանիան, Լիբանանը, Շվեյցարիան և Լյուքսեմբուրգը: Խմիչքների ոլորտում ՕՈՒՆ-երի մեծ մասը բաժին է ընկնում Միացյալ Թագավորությանը, հանքագործության ոլորտում՝ Շվեյցարիային, հեռահաղորդակցության և էլեկտրականության ու գազի ոլորտում՝ Ռուսաստանի Դաշնությանը:

ՀՀ-ում ֆինանսական շուկայի անկատարությունը և թերի զարգացվածությունը պատճառ են հանդիսանում երկրում պորտֆելային ներդրումների ներգրավման փոքր ծավալների և կարելի է ասել գրեթե բացակայության համար: Սակայն, տնտեսագիտական գրականության մեջ առանձնացվում է այն փաստը, որ պորտֆելային ներդրումները իրենցով ունեն մեծ դրական ազդեցություն երկրի տնտեսության վրա և կարող են նպաստել դեպի երկիր նաև ՕՈՒՆ-երի ծավալների մեծացմանը: Այդ իսկ պատճառով ՀՀ-ում անհրաժեշտ է զարգացնել ֆինանսական շուկան, ինչպես օրինակ ձևավորել և զարգացնել արժեթղթերի և պարտատոմսերի, բանկային, ապահովագրական, վարկային կազմակերպությունների, ածանցյալ գործիքներ, արտարժույթի, սփոթ, փողի և միջբանկային վարկավորման շուկաները, որոնք կարող են մեծ հարթակ լինել երկրի ներդրումային գրավչության և վստահելիության մակարդակի բարձրացման համար:

- ՀՀ-ում ՕՈՒՆ-երի՝ տնտեսական աճի վրա ունեցած հնարավոր ազդեցությունը դիտարկելու համար 2001թ. առաջին եռամսյակից մինչև 2017թ. առաջին եռամսյակ ընկած ժամանակահատվածում եռամսյակային կտրվածքով իրականացված ժամանակային շարքերի տնտեսաչափական վերլուծության արդյունքում կարող ենք հաստատել այն փաստը, որ երկրում «ՕՈՒՆ-տնտեսական աճ» հարաբերակցության միջև գոյություն ունի դրական փոխկապակցվածություն: Ինչը առավել մեծ ազդակ է դեպի երկիր ՕՈՒՆ-երի ներհոսքի ծավալների մեծացման

կոնկրետ նախաձեռնությունների և քաղաքականությունների իրականացման համար: Ընդ որում, ելնելով ստացված այն արդյունքներից, որ արտաքին ազդակների առկայության պայմաններում այդ փոխկապվածությունը պահում է կայուն տրենդ, հնարավորություն է ստեղծվում ներդրողներին ներկայացնել ռիսկայնության բացակայությունը: Ռիսկայնության նվազեցման և երկարաժամկետ ու մեծ ներդրումների համար գրավական է նաև էկոնեմետրիկ ստացված այն արդյունքը, որ «ՕՈՒՆ-տնտեսական աճ» փոխկապվածությունը երկարաժամկետ դիտարկման արդյունքում է, որ ցուցաբերել է դրական կապ: Ինչպես միջճյուղային տնտեսաչափական վերլուծության ժամանակ, այս դեպքում ևս ՕՈՒՆ-երը կարող են նպաստել տնտեսական աճի ձևավորմանը ոչ միայն ուղղակիորեն, այլև անուղղակի, քանի որ ժամանակային շարքերի վերլուծության արդյունքները ևս ցույց են տալիս դրական փոխկապվածություն տնտեսական աճի և որոշ դիտարկվող փոփոխականների միջև, ինչպիսիք են, համախառն կապիտալի կուտակումը և ապրանքների և ծառայությունների արտահանումը: Ընդ որում այստեղ հատկանշական է այն փաստը, որ ՕՈՒՆ-երը ձևավորելով տնտեսական աճ դիտարկվող կանխատեսումներում կարող են դրականորեն ազդել տնտեսական աճի վրա նաև նախորդ ժամանակահատվածում ձևավորված տնտեսական աճի հիման վրա, քանի որ ինչպես ցույց են տալիս տնտեսաչափական մոդելի արդյունքները, նախորդ ժամանակահատվածի տնտեսական աճը ևս դրականորեն է փոխկապված դիտարկվող ժամանակահատվածի ներդրումների տնտեսական աճի ցուցանիշի հետ: Վերջին տարիներին ՀՀ-ում ներդրումների ներգրավման խնդիրը ավելի մեծ շրջանակներ է ընդգրկում::

Ներհոսքերը ավելացնելու նպատակով պետության կողմից սահմանվում են արտոնություններ, այնպիսի ոլորտներում ներդրումների իրականացման համար, որոնք, իրենց հերթին, կնպաստեն տնտեսության զարգացմանը: Այդպիսի ոլորտներից են էներգախնայողության, բարձր տեխնոլոգիաների ներդրման, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, նորարարությունների ոլորտները:

Արտոնություններ են կիրառվում նաև անշարժ գույքի ոլորտում, հատկապես այն հողատարածքների նկատմամբ, որոնք պետական սեփականություն են հանդիսանում, սակայն որոշ հանգամանքներից ելնելով չեն շահագործվում: ՀՀ կառավարության կողմից մշակվել է նաև ծրագիր՝ ուղղված երկրի տարբեր տարածաշրջանների հավասարաչափ զարգացվածության ապահովմանը: Այդ նապատակով նախատեսվում են երկրի տարբեր տարածաշրջաններում տնտեսական գոտիների ստեղծումը:

Ներդրումային գրավչության մեծացման նպատակով ՀՀ-ում նախատեսվում է Համահայկական ներդրումային հիմնադրամի ստեղծումը, որի նպատակն է տրամադրել ֆինանսական, խորհրդատվական, տեղեկատվական և տեխնիկական ծառայություններ:

Այսօր ՀՀ-ում որպես ներդրումային բանկի օրինակ առկա է Համահայկական բանկը, որի նպատակն է տարբեր աղբյուրներից հավաքագրված ֆինանսական միջոցներով վարկերի տեսքով աջակցել արտահանմանը միտված մասնավոր ձեռնարկությունների տարբեր ծրագրերին: Քանի որ երկիրը ունի զարգացման մեծ հնարավորություններ և ներդրումային գրավչություններ, ուստի ներդրումների ներգրգրավման հարցը տնտեսական առումով դառնում է չափազանց կարևոր և անհրաժեշտ է նշված հարցի շուրջ մշակել բազմաթիվ ռազմավարություններ:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում՝

1. Այվազյան Հ.Գ. «Օտարերկրյա ուղղակի ներդրումների ազդեցությունը տնտեսական աճի վրա» // «Այլընտրանք» գիտական հանդես, Երևան, 2015թ. # 2, ապրիլ-հունիս, էջ 193-203:

2. Այվազյան Հ.Գ. «Օտարերկրյա ուղղակի ներդրումների ազդեցությունը տնտեսական աճի վրա, էմպիրիկ պանելային տվյալների վերլուծություն» // «Այլընտրանք» գիտական հանդես, Երևան, 2016թ. # 4, հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 267-277:
3. Այվազյան Հ.Գ. «ՀՀ-ում ներդրումների ներգրավման գործում խոչնդոտ գործոնները» // «Այլընտրանք» գիտական հանդես, Երևան, 2017թ. # 4, հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 403-408:
4. Այվազյան Հ.Գ. «ՕՈՒՆ-երի ազդեցությունը տնտեսական աճի վրա երկրների օրինակով, էմպիրիկ միջճյուղային հետազոտություն» // «Այլընտրանք» գիտական հանդես, Երևան, 2017թ. # 4, հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 408-414:
5. Այվազյան Հ.Գ. «Տնտեսական աճի վրա օտարերկրյա ուղղակի ներդրումների ազդեցության բարձրացման հեռանկարները, ՀՀ օրինակով (ժամանակային շարքերի վերլուծություն) // «Հանրային կառավարում», Երևան, 1-2/2018թ., էջ 96-103:
6. Այվազյան Հ.Գ., «ՀՀ տնտեսության մեջ օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) վերլուծական բնութագիրը» // «Ֆինանսներ և էկոնոմիկա», Երևան, 1-2 (209-210), 2018թ., էջ 129-133:

АЙВАЗЯН АЙКАНУШ ГУРГЕНОВНА

ВЛИЯНИЕ ПРЯМЫХ ИНОСТРАННЫХ ИНВЕСТИЦИЙ НА ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ (НА ПРИМЕРЕ РА)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.06 - «Международная экономика».

Защита диссертации состоится 23-ого февраля 2021 года, в 14^{00}, на заседании Специализированного совета 008 ВАК РА по экономике, действующего при Российско-Армянском университете. Адрес: 0051, РА, г. Ереван, О. Эмина 123.

РЕЗЮМЕ

Экономический рост является одним из самых мощных инструментов повышения благосостояния населения, улучшения качества жизни, сокращения бедности, расширения объемов производства и товарооборота, а также развития инфраструктуры. Именно поэтому, экономическая политика свех стран мира нацелена на достижение долгосрочных устойчивых темпов экономического роста.

Экономический рост и факторы, воздействующие на него, всегда были предметом анализа в международной экономической литературе. Особую значимость в данных исследованиях имеет изучение воздействия прямых иностранных инвестиций (ПИИ) на экономичесикй рост, поскольку они способствуют формированию новых типов производственной деятельности, развитию существующих экономик, использованию новейших технологий, росту производительности труда, росту занятости в стране-реципиенте, формированию управленческих и организационных навыков, совершенствованию корпоративной культуры.

Экономика Армении, являясь малой открытой экономикой, также зависит от притока ПИИ. С момента приобретения независимости и по сей день Армения проводит политику привлечения прямых иностранных инвестиций, разработки инвестиционных программ и создания механизмов повышения инвестиционной привлекательности страны, способствуя увеличению потоков иностранных инвестиций в страну. Вышеуказанные обстоятельства в полной мере отражают актуальность и необходимость рассматриваемой темы.

Объектом исследования является ключевая роль инвестиций в обеспечении экономического роста, воздействие прямых иностранных инвестиций на состояние экономики.

Предметом исследования является изучение теоретических аспектов взаимосвязи между ПИИ и экономическим ростом в РА, а также их статистические и эконометрические взаимозависимости.

Основная цель диссертационного исследования – изучить возможную взаимосвязь и влияние между ПИИ и экономическим ростом, представить конкретные решения на примере Республики Армения на основе полученных результатов. Достижение и решение указанной цели предполагает постановку определенных задач, среди которых необходимо выделить следующие:

- ✓ Представить сущность экономического роста, факторы и движущие силы, сущность прямых иностранных инвестиций, способы и системы их стимулирования, изучив теоретико-методические основы инвестиций и экономического роста.
- ✓ Представить теоретико-методические подходы и механизмы возможного воздействия ПИИ на экономический рост.
- ✓ Изучить и представить в цифровом виде влияние прямых иностранных инвестиций на экономический рост с использованием эконометрического анализа панельных данных.
- ✓ Изучить конкурентные преимущества Республики Армения с точки зрения привлечения инвестиций, а также факторы, препятствующие данному процессу.

- ✓ Проанализировать прямые иностранные инвестиции в экономику РА по годам, отраслям и странам-партнерам.
- ✓ На основе анализа временных рядов выявить взаимосвязь между ПИИ и экономическим ростом в Республике Армения.

В результате ряда проведенных исследований, в диссертации были представлены результаты, имеющие теоретическое и практическое значение, основная **научная новизна** которых впредставлена в следующих положениях:

1. При панельном анализе со включением факторов, представляющих интерес для исследования, были получены численные результаты для 87 стран. Одна из особенностей этого анализа заключается в том, что он позволяет рассматривать результаты отдельно для развивающихся и развитых стран. Результаты свидетельствуют о положительной взаимосвязи между объемом ПИИ и экономическим ростом, при этом тесность взаимосвязи выше для развивающихся стран нежели для развитых.
2. На основе анализа временных рядов, на примере Республики Армения, было оценено влияние прямых иностранных инвестиций на экономический рост. Были осуществлены прогнозы и представлены перспективы развития этого взаимовлияния в случае воздействия внешних факторов. В частности, была подверждена положительная взаимосвязь между экономическим ростом и прямыми иностранными инвестициями в Республике Армения. Результаты исследования также подтверждают, что данная взаимосвязь имеет стабильный тренд в случае воздействия внешних факторов.
3. В основе диссертационной работы рассматривалось не только прямое, но и косвенное воздействие прямых иностранных инвестиций на экономический рост. Результаты исследования свидетельствуют о том, что прямые иностранные инвестиции могут иметь также косвенное воздействие на экономический рост в РА, способствуя росту накопления капитала и объема экспорта, а последние, в свою очередь, стимулируют экономический рост. С продолжительным ростом ПИИ, экономический рост будет формироваться как за счет прямого воздействия, так и за счет косвенного. Сформировавшийся процесс может трансформироваться цепочку, поскольку ПИИ способствуют экономическому росту, а экономический рост, в свою очередь, способствует росту объема привлекаемых в страну ПИИ.

HAYKANUSH GURGEN AYVAZYAN

THE IMPACT OF FOREIGN DIRECT INVESTMENTS ON ECONOMIC GROWTH (ON THE EXAMPLE OF THE RA)

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.06 – «International Economics».

The defense of the thesis will take place on the 23rd of February, at 14$^{\underline{00}}$ o`clock, at 008 Council of Economics of SCC RA at Russian-Armenian University: 123 H. Emin str., Yerevan, 0051.

ABSTRACT

Economic growth is one of the most powerful tools for increasing the well-being of the population, improving the quality of life, reducing poverty, expanding production and trade, and developing infrastructure. That is why the economic policy of all countries of the world is aimed at achieving long-term sustainable rates of economic growth.

Economic growth and the factors affecting it have always been the subject of analysis in the international economic literature. Particular importance in these studies has the study of the impact of foreign direct investment (FDI) on economic growth, since FDI contribute to the formation of new types of production activities, the development of existing economies, the use of new technologies, the growth of labor productivity, the growth of employment in the recipient country, the formation of managerial and organizational skills, improving corporate culture.

Armenia, having being a small open economy, is also dependent on FDI inflows. Since gaining independence to this day, Armenia has been pursuing a policy of attracting foreign direct investment, developing investment programs and creating mechanisms to increase the country's investment attractiveness, contributing to an increase in foreign investment flows into the country. The above circumstances fully reflect the relevance and necessity of the topic under consideration.

The object of the research is the key role of investment in ensuring economic growth, the impact of foreign direct investment on the economy.

The subject of this research is to study the theoretical aspects of the relationship between FDI and economic growth in the RA, as well as their statistical and econometric interdependencies.

The main goal of the dissertation research is to study the possible relationship and impact between FDI and economic growth, to present specific solutions based on the results obtained in the Republic of Armenia. Achieving and solving this goal presupposes the formulation of certain tasks, among which the following should be highlighted:

- ✓ Introduce the essence of economic growth, factors and driving forces, the essence of foreign direct investment, methods and systems of their stimulation, having studied the theoretical and methodological foundations of investment and economic growth.
- ✓ To present theoretical and methodological approaches and mechanisms of the possible impact of FDI on economic growth.
- ✓ Study and present in a numerical form the impact of foreign direct investment on economic growth using econometric analysis of panel data.
- ✓ To study the competitive advantages of the Republic of Armenia in terms of attracting investments, as well as the factors hindering this process.
- ✓ Analyze foreign direct investments in the RA economy by years, industries and partner countries.
- ✓ Based on the analysis of time series, identify the relationship between FDI and economic growth in the Republic of Armenia.

As a result of a number of studies carried out, the dissertation presents the results of theoretical and practical importance, the main **scientific novelty** of which is presented in the following provisions:

1. In a panel analysis that included factors of interest for the study, numerical results were obtained for 87 countries. One of the features of this analysis is that it allows the results to be considered separately for developing and developed countries. The results show a

positive relationship between FDI and economic growth, with the closeness of the relationship being higher for developing countries than for developed countries.

2. Based on the analysis of time series, using the example of the Republic of Armenia, the impact of foreign direct investment on economic growth was assessed. Forecasts were made and the prospects for the development of this mutual influence were presented in the event of external factors. In particular, there was a positive relationship between economic growth and foreign direct investment in the Republic of Armenia. The research results also confirm that this relationship has a stable trend in the case of external factors.
3. The dissertation was based on not only direct, but also indirect impact of foreign direct investment on economic growth. The results of the study indicate that foreign direct investment can also have an indirect effect on economic growth in the Republic of Armenia, contributing to the growth of capital accumulation and the volume of exports, and the latter, in turn, stimulate economic growth. With continued growth in FDI, economic growth will be generated by both direct and indirect impacts. The formed process can transform the chain, since FDI contributes to economic growth, and economic growth, in turn, contributes to an increase in the volume of FDI attracted to the country.